

ՄԱՑԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ՇԵՔՈՊԻՐԻ ՀԱՅՐԵՐԼԻՆ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԵԱՆ
Ը ԹԻՒ

(ՀՅՈՒՅՆԵՐՆԵՐՆԵՐՆ)

Ի պատիւ մարդկութեան՝ գրական ժխորը երբեք չկարողացաւ մոռացութեան ենթարկել դասական մեծ հեղինակներին եւ նրանք շարունակեցին մալ որպէս փարոսներ մոքի տատանակեան ման եւ ստեղծագործութեան այլասեռման վայրկեաններում՝ իսկական կոչեցեալների համար եւ ամէն մի գրականութիւն վերականգման ճիգերում նրանց է յենուում: Մշտական թարմութիւնը յատուկ է միայն իսկական գեղարուետին: Զոյան արդէն մոռացուել է, իսկ Դիկկենսի երկերից բուրում է նոյն թարմութիւնը ինչպէս մեծ գրողի ստեղծագործութեան ժամանակ:

Թարգմանչական մեծ շընանի առաջ ենք կանգնած: Եւ այս գործի իրագործման կերպից եւ աստիճանից կը լինի կախուած, թէ ինչ հիմքերի վերայ կը հաստատուի մեր գրականութեան վերածնութիւնը, նրա զարգացումը, մեզ հետեւող եւ նրանից յետոյ եկող սերնդների մտաւոր բովանդակութիւնը, ոգին եւ ուղղութիւնը: Վայրկեանի պահանջները պարզ են եւ նրանց բնոյթը ստիպողական, իսկ հրապարակի վերայ երեւում է միայն մէկը, երկար ժամանակ, յատուկ պատրաստուած եւ այժմ իւր մշակուած սիմերով ամբողջովին նուիրուած այդպիսի մի ասիացի:

Եւ նա եւս մեր իրականութիւնից չէ: Թարգմանչութիւնը ինչպէս քանից շեշտեցինք ստեղծագործութիւն է, բարի ցանկութեան հետ չէ կապուած միայն: Եթէ մէկը չունի ժամանելի հեղինակի տաղանդի բնոյթին հաթարգմանելի հեղինակի տաղանդի բնոյթին համապատասխան ընդունակութիւն, չենք ասում մապատասխան ընդունակութիւն, չենք ասում հաւասար, որ հաղուազիւտ երեւոյթ է, ողջոմը է լինում արդիւնքը, հեղինակի տաղանդի զօրութիւնը աներեւութանում է եւ թարգմանութիւնը հակառակ թարգմանչի կամքին դառնում թէ ինչու թարգմանչական այժմ մեծ կարեւութիւն ստացած խնդիրը արձարելու, մենք ըստ անդհատ կապում ենք այդ գործը տաղանդով ստուած մեր գրագէտների ստեղծագործութեան հետ պական հետ: Ունին նոքա գիտակցութիւն հանապական այլաշ, իսկ այժմ ստացած կապողական բնոյթ ստա-

ցած պահանջի մասին, թէ ոչ, չենք կամենում ծանրանալ այս հարցի վերայ, բայց առանց երկիւղի, թէ սխալի մէջ կարող ենք ընկնել, պիտի ստորագէտենք, որ նրանց ընդունակութիւնները մեր ներկայ պայմաններում ամուլութեան են դատապարտուած: Թող այս կարիքը լինի աղաղակող, նորից կը մայ որպէս ձայն բարբառոյ յանապատի:

Մեր գրականութեան այս ծանր պայմանների եւ նրա մօտաւոր տխուր հեռանկարի դիմաց՝ Յովիչաննէս իսան Մասէ հեանի թարգմանչական ստեղծագործութիւնը մի փայլուն երեւոյթ է մոայլ մթնոլորտի մէջ: Եթէ երեւոյթը միայնակ է, իսկ բացը ահաւոր, նրա թարգմանութեան նիւթը ըստ որպէսի եւ ծաւալի շատ է մեծարդէք եւ թարգմանչի ձեռարկութիւնը վերին աստիճանի իիզաւու: Շէքսպիրի ամբողջ երկերի թարգմանութիւնը հսկայական մուտք է մեր գրականութեան մէջ եւ լաւագոյն հիմնաքարը թարգմանչական գալիք շնութեան, իսկ մինչայդ ինքն ըստ ինքեան մի ակադեմիա մեր գրողների համար եւ մեր պատանեկութեան ընթերցանութեան համար ամենացանկալի նիւթը հանրամարդկային գրականութիւնից:

Մենք թուեցինք, Շէքսպիրի երկերից քանին է Մասէ հեանը թարգմանել արդէն եւ հրատարակել, քանին թարգմանուած են եւ հետզետէ հրատարակուելու են: Իսկ նրա ծրագիրն է տալ հայերէն ամբողջ Շէքսպիրը, շարունակելով իւր թարգմանչութիւնը մինչեւ վերջ, մասսամբ միայն ժամանակ տալով թարգմանութիւնների գէօթէից եւ բայրոնից:

Ինչպէս է թարգմանում Մասէ հեանը Շէքսպիրին: Ցարդ մեր յայտնած կարծիքը Շէքսպիրին: Ցարդ յայտնած կարծիքը եւ պատրաստութեան մաթարգմանչի ոյժերի տուեալներով, մանաւանդ սին փորձենք ստուգել տուեալներով, մանաւանդ հանխակալ համոզում ունենք որ ընթերցող հասարակութիւնները լիչերին են ծանօթ նրա թարգմանութիւնները: Ընթերցող հասարակութիւնները լիչերին մայրէնի լեզուով: Նոյն իսկ այս տերմինը անաբրոնիզմ է գալութային հայութեան վերաբերմամբ, յատկապէս միջին դասակարգի, — բուրժուազիայի: Իսկ մտաւոր պատրաստութիւն ունեցող այլ տարր չունենք նոյն միջավայրում: Թէ ինչու համար, Եւրոպայում գրելով, հայ հասարակութիւն ասելով, մենք աչքի առաջ ունենք հայրինիքից գուրս գանուող հայութիւնը ներկայ պատմական վայրկեանի համար, ինքն ըստ ինքեան հասկանալի է: Մենք գեռսպասում ենք լայն կապերի հայրենիքի հետ եւ

գուցէ այդպիսի շրջանի նախօրեակի առաջ ենք կանգնած, սակայն միայն նախօրեակի: Ժամանակը դարձել է սփինկս. գուշակութիւնների չենթարկում: Իսկ մինչեւ որ հայրենիքը դռները լայն բացուեն, գաղութային հայութիւնը յենարանի տեղ կոտրուած եղեգ է հանդիսանում: Նրա (գաղութային հայութեան) համար չէ ի հարկէ, որ Մասէ հեանը երեւան է հանում իւր թարգմանութիւնները մեկը միւսի ետեւից: Որովհետեւ այդ հասարակութիւնը մայրենի լեզուվ չէ կարդում, եթէ ենթադրել, որ կարդում է: Սակայն մենք անցնենք խնդրին, — Մասէ հեանի թարգմանչական տուեալներին եւ թարգմանութիւնների դրական յատկութիւններին քննութեան:

Հեքսպիրի թարգմանութիւնը բարդ տուեալներ է պայմանջում թարգմանչից: Հեքսպիրը ոչ միայն հանձարեղ դրամատորգ է, միաժամանակ մեծ բանաստեղծ է: Առանց բանաստեղծական տաղանդի նրա թարգմանութիւնը ըստ նիւթի արժանոյն անհնարին է: Ճշտորէն եւ խնամքով թարգմանութիւնը ի հարկէ կարող է վերարտադրել նրա երկերը իրենց դրամատիքական բոլոր արժանիքներով, բայց նրանց բանաստեղծական կեղեւը, որ այնպէս օրդանաբար զօդուած է բովանդակութեան հետ, անխուսափելի կերպով պիտի տուժի, եթէ բնաւ չաներեւութանայ: Մինչեւ Հեքսպիրի թարգմանութեան ձեռնարկելը Մասէ հեանը հրապարակ եկաւ թարգմանութիւններով pur sang բանաստեղծից, Բայրոնից, ինչպէս նկատած ենք, իննանական թուականներին: Մուրճ ամսագրում նրա առաջին եւ ետ դրուժը, Բայրոնի "Վեր առ տաւիլլ", սոնատի թարգմանութիւնը աչքի ընկնող երեւոյթ էր մեր թարգմանչական բանաստեղծական գրականութեան մէջ եւ կասկած չէր թողնում, որ թարգմանիչը ինքը օժտուած է բանաստեղծական տաղանդով: Դորան հետեւեցին մի քանի այլ սոնատների թարգմանութիւններ նոյն բանաստեղծից: Ապա նա շուտով անցաւ Հեքսպիրին: Նիւթի սկզբնական ընտրութիւնը նրան հետեւող վերելքը դէպի Հեքսպիր, արդէն ապացոյց էին թարգմանչի գրականական բարձր ճաշակի: Այդ բոլորով հանդերձ, նոյն իսկ Հեքսպիրի երկերից նրա առաջին թարգմանութիւնները չէին կարող ենթադրել տալ, որ յանձին մի օտար պետութեան դիպլոմատի հաւունանում է մի խոշոր հայ գրականական դէմք, այնքան քիչ է բախտաց փարփայուած մեր գրականութիւնը: Սակայն անակնակալ տեղի ունեցաւ

եւ այսօր նոյն անձը, անընդհատ կատարելագործուելով, գալիս է մուծելու մեր գրականութեան մէջ մի անգին դանձ, յղի մեծ արդիւնքներով եւ հետեւանքներով: Հարկաւոր է արդեօք վերստին ընդգծել, որ արտաքուստ նպաստաւոր պայմանները պիտի դեր կատարէին այս երեւոյթի ծագման համար, ոչ թէ մեր իրականութիւնը: Կարող է հարց լինել, որ Մասէ հեանը թողնուած մեր պայմաններին, սկզբէից եւեթ նուիրելով միայն մեր գրականութեան, այսօրուայ քանակութիւնը չէր ներկայացնի: Ծատ է արդէն դաժան գրականական գործիչի համար մեր իրականութիւնը: Բոկլի օրէնքը մեղանում անզօր է նոյն իսկ մտաւոր եւ գեղարուեստական հետաքրքրութիւն ստեղծելու գործում: Կարող է պատահէի որ մեր գրականութիւնը գեռ երկար ժամանակ զուրկ մնայ եւրոպական միւս մեծ ստեղծագործողների ամբողջական թարգմանութիւնց՝ գեղարուեստական պահանջներին համապատասխան վերարտադրութեամբ: Տուեալները չունենք պայմանի յաջորդականութեան համար, Ճնշիչ հեռանկարի դիմաց Հեքսպիրի երկերի մուտքը հայ գրականութեան մէջ կրկնակի մեծ երեւոյթի նշանակութիւն է ստանում: Եթէ հանրամարդկային մի հանձար պիտի թագաւորէր հայ գրականութեան մէջ, Մասէ հեանը լուծել է խնդրը, ումն է պատկանում գերադասութիւնը: Սպէսնէրը ասում է, եթէ նա հարկագրուած լինէր ընտրելու՝ կամ ամբողջ գրականութիւնը կամ Հեքսպիրին, առանց տատանուելու կ'ընտրէր Հեքսպիրին:

Որոշելու համար, թէ որքան է յաջողուել Մասէ հեանին Հեքսպիրի թարգմանութիւնը մենք լաւագոյն համարեցինք նախ դիմել համեմատութեան ուռւական թարգմանութեան հետ, ընտրելով Հեքսպիրի գլուխ գործոցը՝ Համբէտը: Յայտնի է թէ ինչ բարձրութեան է հասած թարգմանչական ստեղծագործութիւնը Ռուսաց գրականութեան մէջ: Մենք ընտրեցինք ուռւական վերջին թարգմանութիւնը — Կրոնենբերգի, 1912 թ. կատարած: Համեմատութեան արդիւնքը ուրախալի է մեր գրականութեան համար, բանաստեղծական չափով գրող եւրոպական մէծ հեղինակի երկերի ամբողջական թարգմանութիւնը առաջին անգամ է, որ մեղանում գալիս է հասնում ուռւականի բարձրութեան: Իսկ շնորհիւ մեր թարգմանչի անդլիական լեզուի հիմաւոր տիրապետութեան եւ խորը Հեքսպիրագիտութեան, բնագրի ճշտորէն վերարտադրութեան տեսակէտից նա մնում է անսայթակ,

մի էական հանգամանք, որը ուսւ թարգմանիչը զոհում է երբեմն բանաստեղծական արտաքին գեղեցկութեան: Յայտնի է Վկիկոր Հետպյի ծայրաշեղ պահանջը Շեքսպիրի թարգմանութեան վերաբերմամբ: “Շեքսպիրին, պիտի մօտենալ իրբեւ Աստուածաշնչին:

Սակայն այսպիսի խնդրում (համեմատութիւն ուստականի հետ) միշտ պիտի աչքի առաջ ունենալ մի խոշոր հանգամանք, թէ որ աստիճանի կատարելագործութեան է հասած ուսւաց լեզուն, մանաւանդ նրա բանաստեղծական ոճը. մինչդեռ մեր աշխարհաբարը գտնուում է գեռի զարգացման պրոցեսում, իսկ բանաստեղծական լեզուն դեռ մանկական հասակում: Ընդհանրապէս հաւասար պայմանների մէջ չեն գտնուում հայ եւ ուսւ թարգմանչները:

Համեմտի մէջ ամենապղու վայրկեանը, ուր ամենախոր հոգեկան ապրումները, վեհ մոքերը եւ բանաստեղծական յոզերը անբաժան զուած են իրար, Համեմտի “Կինել թէ չէ լինել” մենախօսութիւնն է: Բերում ենք այդ վայրկեանի համար հայ եւ ապա ուսւերէն վերարտադրունակ հայ եւ ապա ուսւերէն վերարտադրունակ թիւնները.

Կինել, թէ չըլինել, այս է խնդիրը.

Ո՞ն է հոգեպէս աւելի ազնիւ.

Տանել գուռ բախտի պարսպարերը եւ պարաները, թէ զէնք վերցնել ցաւ ու վշտերի մի ծովի ընդ-

եւ՝ դիմադրելով, վերջ տալ բոլորին:

Մեռնել, քնանալ, ոչինչ աւելի.

Եւ մտածել, թէ մի պարզ քնով մենք վերջ ենք տալին:

Այս սրտացաւին եւ բիւր բնական անձկութիւնն անընիւն,

Որոնց ժառանգ է մեր հետ մարմինը, Մի վախճան է դա, հոգով բաղդալի:

Մեռնել, ննջել, ննջել... գուցէ երազել, Այս այդ տեղ է, քանզի այդ մահուան քնի ժամանակ

Անչ կերպ երազներ պիտի գտն գուցէ, Երբ այս մահացու կապոնքը մեզնից թօթա-

փած լինենք՝ պիտի է տայ, այս Ահա ինչ որ մեզ իսրհել պիտի է տայ, այս

Որ այսչափ երկար տեւել է տալին թշուառու-

թէ ոչ, ոչ արդեօք կուզէր հանդուրժել Աշխարհի այնքան նախատինքներին եւ մորակ-

Հարստահարչի անիրաւութեան,

Մեծամիտ մարդու արհամարհանքներին, Քամահրած սիրոյ ուսւայտանքներին,

Օրէնքի բոլոր ձգձգումներին, Պաշտօնեաների աներեսութեան Այն հարուածներին, որ համբերատար արժանաւորը Ստանում է միշտ անարժաններից:

Այն ինչ կարող էր մարդ իր հաշեւը իր ձեռքով փակել

Մի մերկ դաշնով: Ով կը յօժարէր այսքան բեռ կրել,

Հեծել ու քրտնել տալուով կեանքի տակ, Եթէ երկիւղը մի ինչ որ բանի մահուանից յետոյ,

Այն անցաւ երկրի, որի ասհմանից Ու մի ուղեւոր չէ վերադառնում, Շը ձգէր կամքը երկբայութեան մէջ եւ մեզ չը ստիպէր

Տանել աւելի այն չարիքները որ այստեղ ունենք, Քան թէ սաւառնել գէպի նոր ցաւեր, որոնց անգէտ ենք.

· · · · ·

Быть или не быть — вотъ въ чемъ вопросъ!

Что благороднѣе, сносить ли громъ и стрѣлы

Враждующей судьбы или возстать на море бѣдъ и кончить ихъ борьбой?

Окончить жизнь, уснуть,
Неболѣе и знать что этотъ сонъ
Окончить грусть и тысячу ударовъ,
Удѣль живыхъ. Такой конецъ достоинъ
Желаніи жаркихъ. Умереть? Уснуть?

Но если сонъ видѣнія посѣтять?
Что за сны на смертный сонъ слетятъ,
Когда мы страхнемъ суetu земную.
Вотъ что дальнѣйшій загромождаетъ
путь!

Вотъ отчего бѣда такъ долговѣчна
Кто бы снесъ бичъ и посмѣнія вѣка,
Бес силе правъ, тирановъ притѣсеніе,
Обиды градаго, забытую любовъ
Презрѣніи душъ презрѣніе къ заслу-

гамъ,
Когда бы могъ нась подарить покоемъ
Однѣнъ ударъ? Кто бы несъ бремя жизни,
Кто бы гнулся подъ тяжестью трудовъ?
Да только страхъ чего то послѣ смерти,
Страна безвѣстная, откуда путникъ
Не возвращался къ намъ смущаетъ

волю . . .

· · · · ·

Այս կառից երեւում է, որ հայ եւ ուսւ թարգմանիչները իրար չեն զեջում գեղարուես-
տական արժանիքների տեսակէտից: Սակայն կայ նկատելու մի կարեւոր հանգամանք: Ուսւ թարգմանչի ոճը իւր գեղեցկութեամբ հանդերձ.

ակներեւ պաթետիկ է. մինչդեռ յայտնի է, որ անգլիական մեծ հանձարի հիմնական յատկութիւնն է րեալիզմ եւ պարզութիւն, որոնց դրաշմը նա դրեց անգլիական գրականութեան վերայ եւ նախորոշեց նրա ուղղութիւնը: Սրանից կարելի է եղանակացնել, որ Մասէհեանին լիդհանրապէս յատուկ ոճի պարզութիւնը որքան աեղի է Ըէքսպիրի թարգմանութեան վերաբերմամբ: Գալով բնագրի հարազատ վերաբարութեան, որ իդէալն է ամենայն մի թարգմանութեան, հնարաւորութեան սահմաններում, — այդ կողմից եւս առաւելութիւնը հայ թարգմանչի կողմն է: Ստուգենք այս նոյն մնոյոդի հայերէն եւ ուռսերէն թարգմանութիւնների իրարից տարբերուող պարբերութիւնները համեմատութեամբ անգլիարէն բնագրի հետ:

Հայերէն՝

Ո՞րն է հոգեպէս աւելի աղնիւ:

Ուռսերէն՝

Что благороднѣе?

Բնագիր՝

Ո՞րն է աւելի աղնիւը հոգու մէջ:

Ուռս թարգմանիչը զանց է առնում «հոգու մէջ» խօսքը: Ըէքսպիրը զուր աւելը աւելուրդ բառ չի դնել: Հոգին յիշելով, որոշումը, այսպէս ասած, թողնում է հոգուն: Այդ միտքը հայ թարգմանիչը ուղիղ է թարգմանել՝ հոգեպէս բառով:

Հայերէն՝

Տանել գոռ բախտի պարսպարերը եւ պաքները, թէ զէնք վերցնել ցաւ ու վեշտերի մի ծովի եւ դիմադրելով՝ վերջ տալ բոլորին:

Ուռսերէն՝

Сносить ли громъ и стрѣлы
Враждающей судьбы или возстать
На море бѣть и кончить ихъ борьбой.

Բնագիր՝

Տանել կատաղի բախտի պարսպարերը եւ նետերը, թէ զէնք վեր առնել փորձանքների մի ծովի դէմ եւ դիմադրելով վերջ տալ նրանց: Հայերէն նոյնութեամբ է թարգմանուած: Մինչդեռ ուռս թարգմանիչը փոխել է պատկերը, գործածելով որոս բառը, որ չկայ անգլիէններէնում: Զպիտի մոռանալ եւ այն, որ Համլէտը ինքնասպանութեան ճնշող տրամա-

դրութեան տակ չէր կարող անտեղի պաթետիկ բառ գործ ածել, որ առհասարակ յատուկ չէ Ըէքսպիրին:

Հայերէն՝

Թէ ոչ ո՞վ արդեօք կ'ուղէր հանդուրժել,
Աշխարհի այնքան նախատինքներին եւ մորակ-
ներին

Հարստահարչի անիրաւութեան . . .

Օրէնքի ձգձումներին,

Պաշտօնեանների աներեսութեան,

Այն հարուածներին, որ համբերատար արժա-
նաւորը

Ստանում է միշտ անարժաններից,

Այն ինչ կարող էր մարդ իր հաշեւը իր ձեռքով
Փակել

Մի մերկ դաշյնով:

Ուռսերէն՝

Кто бы снесъ посмѣнія вѣка,
Безсиліе правъ, тирановъ притѣсненіе,
Обиды гордаго, забытую любовь,
Презрѣнныхъ душъ презрѣніе къ
заслугамъ:

Когда бы могъ нась подарить покоемъ
Одинъ ударъ?

Բնագիր՝

Որովհետեւ ով կ'ուղէր տանել ժամանակի (աշխարհի) մորակներին եւ արհամարանքներին, հարստահարչի անիրաւութեան, գոռող մարդու արհամարանքին, արհամարուած սիրոյ գալարանքին, օրէնքի ձգձումնի, պաշտօնի (պաշտօնեանների) աներեսութեան եւ այն հարուածներին, որ համբերատար արժանաւորը ստանում է անարժանից, երբ նա ինքը կարող էր իւր հաշեւը փակել մի մերկ դաշյնով:

Ուռս թարգմանիչը այս հատուածի աւելի շուտով բովանդակութիւնն է արտայայտում, քան թէ նրա թարգմանութիւնը տալիս: Հարստահարչի անիրաւութեան նա թարգմանում է — тирановъ притѣсненіе, այսինքն բռնակալների հալածանքը. օրէնքի ձգձումն նա թարգմանում է բես силіе правъ, այսինքն օրէնքի թուլութիւն: պաշտօնի աներեսութեան բոլորովն չէ թարգմանում: Արհամարուած սիրոյ գալարանքին թարգմանում է забытую любовъ — մոռացուած սէր: Երբ նա ինքը կարող էր իւր հաշեւը փակել մի մերկ դաշյնով — թարգմանում է եղանակ մեր կամ ամառ համաձայն բնագրին:

Բնագրի ճշտորէն վերաբռնադրութեան տեսակետից հայերէն եւ ոռուսերէն թարգմանութիւնների մէջ նոյն տարրերութիւնը նկատելի է բազմցու։ Մեծ տեղ կը բռնի համեմատութիւնը, եթէ ծայրէ ծայր կատարենք։ Թէ որքան հայ թարգմանիչը նրբօրէն հետեւում է բնագրին (մի վայրկեան չպիտի մոռանալ, որ այդ բնագիրը պատկանում է Ըէքսպիրին) բերենք եւս երկու օրինակներ, որոնք այս տեսակետից շատ բնորոշիչ են։ Դերասանի մնողոգի մէջ, ուր նաև նկարագրում է Հեկուբայի եղերական տեսքը, թարգմանուած է։

Հայերէն՝

...Պատմումանի տեղ
Երկունքից մաշուած զիստերի վերայ մի վերմակ
ձգած

Որ խումապի մէջ հաղիւ էր դաել...

Ոռուսերէն՝

...На мѣсто царской мантии
Наброшено въ испугѣ покрывало
На плечи, ихкудавшія отъ горя...

Բնագրի՝

Եւ պատմումանի տեղ իր նիշար եւ բոլորովին երկունքից մաշուած զիստերի վերայ մի վերմակ ձգած, որ վախի խումապի մէջ ձեռք էր ձգել...

Ոռուս թարգմանիչը այս հատուածում միանգամայն փոխել է բնագրի միտքը, թարգմանելով, նիշար եւ բոլորովին երկունքից մաշուած զիստերի վերայ մի վերմակ ձգած, որ վախի խումապի մէջ ձեռք էր ձգել։ Համѣсто царской мантии наброшено въ испугѣ покрывало на плечи, исхудавшія отъ горя, այսինքն արքայական վերաբռնի տեղ երկունքի մէջ մի ծածկոց ձգած վշտից մաշուած ուսերի վերայ։ Մինչդեռ Ըէքսպիրը Հեկուբայի բոլորովին այլ յատգեռ Ճերմակ էր Հեկուբայի տեղուում — ծննդաբերութիւնը, կուժիւն է շեշտում — ծննդաբերութիւնը, որից մաշուել էին նրա զիստերը։ Այդ շեշտում տեսարանի եղերականութիւնը աւելի ալով տասարանի եղերականութիւնը աւելի հաւոր է դառնում, որովհետեւ այդ գիշերը նրա մնացած որդիները (Հեկուբը վաղուց արդէն սպանուած է) ենթակայ են կոտորածի։ Ոչի արտաքին գեղեցկութեան վերադասութիւնը աւտաքին բազմութիւնի չի անցնում։ Որդին ընակն են վիշտը որակելու համար մաշուած ուեր, բառերը։

Աւելի քան երկու տասնեակ տարիների ընթացքում ուսումնասիրել Ըէքսպիրագիտու-

թիւնը, ջանալ հիմովին տիրապետել անգլիական լեզուն, ապա ձեռնարկել Ըէքսպիրի թարգմանութեան, խոր գիտակցութեամբ որ այդ հանձարի մաքերի փոփոխումը թարգմանութեան արագին գեղեցկութեան համար միանգամայն թոյլատրելի է, որովհետեւ եւ չնչին փոփոխութիւնը կարող է վասնգել շինութիւնը, ահա հայ թարգմանչի ինչ առաւելութիւնն է պարզում այս համեմատութեան ժամանակ։

(Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ)

Յ. ՍԱՂԱԹԻԼԵԱՆ



ԱՅԻ ԵՒ ԱՅԻ Ե

ՈՐԻՆԿԵՐՈՒ ԵՆ ՈՐԻՆՆԵՐ

Հայաստանի բյուերու ուսումնասիրութեան ժամանակ անտես առնուած են սունկերը, որոնք նյոյքան կարեւոր են հայ բուսաբառութեան տեսակէտով։

Այստեղ կը դնեմ Ակնայ Անջրդի գիւղին բնակիչներէն որ, Վրթանէս Ղաղարեանի կողմէ ինձ հաղորդուած քանի մը սունկերու անուններ։

1. Վարդ սունկ. — գոյնը վարդագոյն է, ներքեւի կողմը սեւախառն ճերմակ կը բուսնի կաղնիի տակ։

2. Խմոր սունկ. — գոյնը ճերմակ է, կը բուսնի կաղնիի տակ։ Կը սմանի խմորի գնտի։

3. Կովլակ սունկ. — գոյնը հողի կը սմանի, բայց քիչ մը կարմրուակ է դրսէն. իսկ ներեւքի կողմէն ճերմակ է. կը բուսնի կաղնիի տակ։ Ասիկա կը կարծեմ ըլլալ Champignon des jachères ըսուածը, եւ կամ՝ Boule-de-neigeը։

4. Կաթն սունկ. — գոյնը կաթի նման ճերմակ է. կաղնիի տակ կը բուսնի. Կովլակի ձեւն ունի, բայց շատ փափուկ է եւ բոլորովին ճերմակ է։

5. Կաղին սունկ. — գոյնը հողի կը սմանի բայց կարմրուակ է, իսկ ներքեւի կողմը ճերմակ է. մարմնը կարծը է։ Ասիկա կը կարծեմ ըլլալ Champignon taché ըսուածը։

6. Փատ սունկ. — գոյնը ճերմակով խառն մոխրագոյն է. Կաղնին սունկին տեսակէն